



Պատասխանատու
գովանեն Փիլիպեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՐ

Հիմնական ուղղելի և
ան. Գ. Գ. Պալատյան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՊԱՌԻՍՏԵՐՈՐ ԶԱՐԻ

ԶՄԻՌՆԻՐ ՇԱՐԱԹ 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1879

ԹԻՒ 1133

ԱԶԳԱՅԻՆ

ԻՆՉ ՎԻՃԱԿԻ ԶՈՍՍԾ Է ԶՈՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրական հրատարակչության մասին գիրքին է երբ հեղ մը մտքի անցյալի լրացրաց կնիցունք ինչը և աչքի առջև բերուի գրական հրատարակչության մասին և Լրագիրները փոխանակ առնալու կամ գոնե եղանակները ճշմանալու, որ բառ-րե նուազիլու և յետագիւնելու վիճակին մէջ ինկած են: Պատճառը յայննի է, այսինքն ժողովրդեան դատաւարանի խնայողութիւնն ընթացման մասին, հարուստներու քով զոհողութեան սովը, բնկերութեանց քրտիրներ հիւնելու մասին ունեցած երկաթեղէն անտարբերութիւնը, և հետեւաբար ներկայ և ապագայ լրագրացե տաց յուսաւատութիւնն ու թուրութիւնը: Սակայն ցաւալի կէտն այն է որ, ընթացողն ու լրացող վերի յիշուած որ գրական աշխարհը և իրաւունք տալէ չիւղիւր, և վայրկեան մը ետե իւր միևնոյն զարհուրելի կացութեան մազ մը անգամ չընկիր:

Գրական հրատարակչության մասին նուազութեանն ալ կրնամք միևնոյն պատճառները վերագրել, երբեք հեղինակ կամ թարգմանիչ մը չախտի կրնայ ըսել թէ, իր անխտանաց լուսին վարձքը ընդունած է կամ նիւթ ապէս կամ բարոյագէտ: Իսկ եթէ կան որք գոհողութիւն յանձն առած երեք նպատակով մը հրատարակչության ձեռնամուկ կըլլան, անոնց ևս տրուածն ու գանգաւոր յանկարծ երեան սխալի գայ, և չախտի յառաջ վարէ քայլերը իր առջև բացուած կամ իրեն վիճակուած անպարտելին մէջ: Չհոն զուրկութիւնը մշտնջենի յանձնառու չախտի գոնովի երբեք գրական մտադրոյ մէջ, վասնզի չախտի կարենայ անալ աշխատութեան ետե նիւթական սպանման ալ: այս բնական բան է, գոհարութեանն զիմադրելու կարող անձ մը, որոյ կարողութիւնը, անհետած բան չէ որ, գրական նութեանը պարտաւոր և իրեն մտնում որ արուեստն ընէ զայն (զէլ մեր ազգին մէջ): Գրական մտքը լուսնը թէ և քիչ ժամը և կրնալեան ժողովան գաւառը նշանակել կրնալ ժողովրդոյ մէջ, այլ բուն աչքերու ճար մը փնտա ու կրնալ նշանակել մեր ժողովրդեան մէջ:

Մեր ժողովուրդը կրնամք ընդ հայրնապէս չորս կարգի բնութեւնը, Ա. Տերութեան զանազան վարչութեանց մէջն պաշտօններու գաւառ որ իրեն գրականութեան վրայ գուցէ վայրկեան մը անգամ չիտրհիր, անոր լրագիրները տաճկերէն և գաղղիերէն են, իսկ գիրքերը իրեն զրանգունք ներն են, Բ. Հարուստին կամ վաճառականաց դասը, որ ընթերցանութիւն և գրականութիւն ըսելով կոտնական արարողութիւնները հեղեղ կըհասնայ ընդ հանրագէտ, բացառութիւնները քիչ են, Գ. Զանազան արհեստանոցից կամ խնամախոսներու դասը, որ հազիւ թէ սովորաբար գրուած գրքի մը 0/0 80ը կարող է հասկընալ, երբ անորին 1-2 անգամ գիրք մը բանալու ձանձրութիւնն ունենայ, Դ. Բաւական ասորիներ, մտնելութեան ատեն, գարոց յաճախած և քիչ շատ գրականութեան ճաշակե առնելով զանազան միջոցաւ կենդանաւարտութեան մասնց գաւառ, որոյ միայն վիճակեալ է կարծես լրագիրներ և գիրքեր թղթատելու նոյն ինքն լրագիր կամ գիրք հրատարակելու սովորութիւնը: Այս սղբայի կացութիւնը կարող է արդեօք վրկութեան առաջնորդել քննել, Մենք եթէ գարոցական չըմանք լրագրութեան գրել կարգալ սովորութիւնը, կըկարծէմք թէ ալ ամեն բան լրացած

է մեղի համար, թէ ուսած եւք ինչ որ հարկ էր ունիլ աշխարհիս մէջ: Բայց չկայ անխտարհիս մէջ մարդ մը, ամենէ մեծ գիտունն իսկ որ մինչև խոր ծերութիւն, մինչև ի գերեզման սորվելու կարտաութիւնը չ'ունենայ, և ինչ բանով կամ ինչ միջոցով կըսորվի (սորվելը կրթութիւն և լուստ որուի է) մարդ: Լրագիրով և գիրքով եթէ հեռուն եղածը սորվիլ ուզէ, տեսնելով և փորձառութեամբ եթէ մտքը եղածը: Իսկ քանի որ միշտ հեռուն եղածը, օտարին գործածն ու բրածը իրմէ խեղցիին անսանն ու գործածն է սորվելու արժանի բանը, ուստի ատենք ալ չ'ինչ կրնայ ցոյցնել մեզ, բայց եթէ լրագիրը կամ գիրքը: Աշխատիք ուրեմն հասարակաց կրթութեան այս ամենակարևոր գործիքները տարածել, շատցունել, և ամեն գաս թող իր կոչումին համեմատ օգնէ իւր ընկերին:

Չընէք վայրկեան մը այս խօսքերը, և մտնելութեամբ մտածելով թէ, ժամանակը ամեն բարոյական ցաւ կըբուժէ, և խօսիմք քիչ մ'ալ մեր ներկայ, այս ժամուս ունեցած գրականութեան զանազան գոյներուն վրայ:

Կան շատ հրատարակչութիւններ, որք ոչ թէ օգուտ կամ լոյս տարածելու, այլ հեղինակին կամ թարգմանչին սին պարծանք մը տալու յատկութիւնն ունին, ասոնք են միայն որք բունի գոհողութիւն ընել կուտան հեղինակին կամ թարգմանչին, իսկ ժամանակի կորուստ ընթերցողին: Կան ալ որք իրապէս ժողովրդեան գեան գանազան կարգի անձանց օգտելու և լոյս տարածելու վիճակուած են, բայց գործողութիւն գիրքերը տարածուած չեն ժողովրդեան մէջ զի կարողանալին իրենց լոյս տարածել: Ասի շատ գէշ է և երկու տեսակ վնաս ունի համանգամ, նախ հեղինակին աշխատանաց անարդիւնութիւնն ու ժամանակի կորուստը, երկրորդ ժողովրդեան այդ լոյսն զրկուելը: Կան ալ որք իրապէս անխտան և անօգուտ ըլլալէ զան մնասակար իսկ են: Այս վերջին բանն էն որ գործողութեանն սոր նոր իմաստակութիւններ կըմնին: Մեր ունեւիճակուն կարծեալ երիտասարդաց մէջ, մանաւանդ ի Պոլս, ատեսակ մը մտութիւն երեան ելած է մտերս, որ է ինքն-գիրքիներէ երտպական գրագիրաց հանձնար միտքեր և հանուկութիւններ ունենալ կարծելով խննդ ու խելառ գրուածներ հրատարակել, լեղ հոնակ ստանալու մտնումութեամբ, բայց փոխանակ իրենց փնտաւոր մտանալու իրենց բարոյ թեթեւութիւնը կըյայտնեն մտացի ընթերցողաց, բան մը: Նոր բան մը քարոզել ուզելու ելնելով չեղեւի վարձք կրնան և թեթեւամտութիւնն ու հոգեկան հիւանդութիւնն երեան կըհանեն առանց զգալու: Երբ լրագրաց մէջ հրատարակուած գրքին ժանտեղ կարգայ մէկը, տիպառն խորութեամբ բան մը ըլլալ կըկարծէ զայն, իսկ երբ այդ հրատարակչութիւնը ձեռք ձգելով աչքէ անցունելու գործողութիւնն ունենայ, ուրիշ բան չենաներ անոր մէջ այլ մտքի չափէ գուրս թեթեւութեան: Անգղիէ հիւանդութեան և ատկէ անկէ վտանգ մտաբալու աներեսութիւն նշաններ:

Ասոնց մէջ գլխաւոր անի մը կըբուժէ Փիլիսոփայական ԲՆԱՍՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ քուսած խայտառակ անտրակ մը: Երբ խոշոր բառեր, որոց իմաստը չհասկնալը կըցոյցնէ հեղինակը: Ա. Ազատախոհեան մը, որ այդ երբ բառերուն վերեք նստած, ինքզինքը վայել էր (չհասկցածը ծաղրով) մը կարծելով, վրան վերիվերոյ գաղափար մը անգամ չունեցած ծանր խեղիքներու հետ կըուելու կուզէ, և խելքի գարտանգութեան մէջ ինչարով անչաճ, անիմաստ և թեթեւ շարա-

գրութիւն մը հրատարակ կընես:

Ոչ այնքան ծաղրելու քիչ ժողովուրդին արդեւնել որքան ծաղրելու քիչ ժողովուրդին արդեւնել նորապէս ունի, եղեր, գրողին եղեւիլը: Սակայն մենք գիրքալ լրագրութեան մէջ, Ոչ այսքան ժողովրդեան օգուտ մը ընել է գրողին եղեւիլն նպատակը, որքան Ա. Մամուլէն գուլեատ սպասելու համար չեղեւիլը մը երեան հանել:

Փիլիսոփայութիւն բառին նշանակութեան անգամ հմուտ չըլլալ կըթուի գրողին եղեւիլը: Վասնզի իր ցնորական գրութիւններուն փիլիսոփայութիւն չեն բուեր, այլ հոգեկան կաշաղակեան խանգարում:

Բառագիր մը անագէտ կըհաշակէ գրողին եղեւիլը, թէ և ամենագէտ բառը աշխարհիս հարաւոր աղցեալ և ներկայ փիլիսոփայաց ամբողջութեանն ալ չվերածուի: Խմբագիր մը իմաստուն, իմաստաւոր, զարմանալի գրուի, ստանալի յետոյ և այլն կըգուտար, թէ և անցեալ և ներկայ Հայ գրագիրաց ամբողջ համախմբութիւնը արժանի չըլլայ այդպիսի շափազանց շողոքորթութեան մը: Բանագիր մը քիչ ժողովուրդ անունով կըմկրատէ, թէ և ինչպէս ընինք, բառին նշանակութիւնը իմացած չըլլայ գրողին եղեւիլը: Իսկ ինչ պատուանուն կամ տիտղոս պիտի մայ արդեօք երբ ուրիշ հանձնար մը գոյանայ Հայոց մէջ քանի մը ասորիէն, վասնզի, կըխորհմք որ չկայ ատենցմէ ատերի գերագիր ամական մը որ վայել ըլլայ իրապէս գիտուն կամ իմաստուն մէկուսը տարու:

Վերջին Աստուած Լիթուէն ատերի բան գիտէ կըսէ գրողին եղեւիլը: Բայց ինչ ըսել կուզէ, չկայ բան մը արդեօք որ Լիթուէն անձանով ըլլայ, Արդեօք Լիթուէն հասրեց աշխարհիս այն ամեն գիտերը, արուեստները և գիտութեան արդիւնքն եղող զանազան հնարագիտութիւնները, Արդեօք այդ մարդը տուն տըւաւ Հիւսթոնտի, այդ էր լուսոյ ծանրականութեան օրէնքները գտնողը, շողեչարժ մեքենայներն հնարողը, եւ ըտրական գործողութեց զանազան իրողութիւնները հաստատողը: Լիթուէն էր արդեօք բնաբանական և քիմիական գործողութիւններն իրացնողը, այդ բառագիրը կամ գրական (շորական) իմաստասիրութեան հեռեւորէն էր արդեօք Պալատին գագաթէն զինեալ գուրս ելող իմաստութիւնը: . . . Հապա ինչ ըսել կուզուի ամենագէտ բուերով: Բառագիրը, եթէ ոչ գրականութեան հմուտ կամ գրագէտ անձ մը, Ոչ թէ Լիթուէն, որ պարզապէս գրագէտ կամ գիտնական մարդ մը ըլլալէ անդին չ'անցիր, այլ նաև աշխարհիս բոլոր գիտութեանց, արուեստից, ճարտարութեանց և փիլիսոփայական գրութեանց հնարիչներու համախմբութեանն անգամ կարելի չէ ամենագէտ ընել, որք միշտ պակաս մը ձգելով և դէպ ի սորվիլ ձգտելով մեռած են:

Չէր արժէր թէ և այսքան խօսէինք, սակայն ինչպէս ըսինք մեր գրականութիւնը մտերս շինուելու անդ աւրուելու հակամէտ է տգէտ և իմաստակ մարդոց հրատարակ նետուելով, որոյ միակ փառքը և սին ու անարժան պարծանքն է միտքը, ծաղուսը և ծառայութիւնը չիտացած կրօնը ծաղրել, դեռ ինքզինքին ինչ ըլլալը չիմացած, և լիթ Աստուածային գոյութե վրայ տարակոյս ցոյցնել և խենդ ու խելառ գագափարներով չգոյութիւնը վճալ, վերջապէս ինչի մը վեր ելելը: Երբ գրականութիւնն ունենալով փնտնոց զայրոյթ ին ոմանց ծիծաղին և ոմանց ալ քնտնի տեղի տալ: Աւելի լաւ էր որ մամուլը խուլ մնար այս տեսակ աղայական գրուածոց որք չինուու անդ կըխանգարեն, և օգտելու անդ կըմնան:

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՏՈՒՆ ՉՄԻՒՆԵՒՈՅ

Այս ազգային հաստատութեան Տնօրէն Խորհուրդը դրատան մէջ պարունակեալ մատենից նոր ցանկը հրատարակած է, որ իր նախորդ ցանկին հետ բազմապատկուած բաւական յաւելում մը ունեցած է ։ Բարախ եմք որ յառաջդիմուսէր ազգային քորքարօրէ կրփութան Չմիւռնից սոյն ազգային հաստատութեան ծաղկելուն օգնել իրենց թէ նիւթական և թէ բարոյական ձեռնտուութեամբ ։ Նոր ցանկին ցցուցածին համեմատ Չմիւռնից ընթերցատան գրատունը ։ Կը պարունակէ այժմ 2000 հատորներէ աւելի գըրքեանք ։ որոց մեծագոյն մասը գաղղիներէն և հայերէն է ։ Կան նաև գերմաներէն, իտալերէն և յունարէն ։ Հայերէն մատենից մէջ առաջին տեղ կրբունեն վեներտիկի և Վիէնայի միաբանութեան նախած գրեանք ։ Գաղղիներէն և Անգլիներէն գրեանց մէջ ևս կը գտնուին նշանաւոր հեղինակներու գործեր ։ պատմութեան գիտութեան, փիլիսոփայութեան և այլն վերաբերեալ ։ Տասնէն աւելի հայերէն թէ հին և թէ նոր հանդէսներ կը գտնուին, իսկ գաղղիներէն և օտար լեզուներէ կը գտնուին քսանի չափ հանդէսներ ։ Կան նաև հայերէն ամեն տեսակ լրագիրներ, գաղղիներէն և անգլիներէն նշանաւոր թերթեր ։ Եթէ զարմանալի չէ որ տառիկներէն գիրք չգտնուիր գրատան մէջ, գտնէ տառիկներէն 1—2 թերթեր գտնուիլ վայելուչ էր, ընթերցատան կատարելութեան համար ։

Սակայն գլխաւոր ինքիրն հոն է թէ արդեօք ընթերցատան կամ իւր գրատան օրէ օր շարք գաւաճումը կրցած է զգալի օգուտ մը ընել հասարակութեան ։ Վասնզի, ինչպէս որ պանծին առատութիւնը արգիւնք մը յառաջ չբերէր, երբ անտուկին մէջ փակուած մնայ միշտ, նոյնպէս կեցած տեղերին օգուտ մը չեն կրնար ընել գիրք և լրագիրք, եթէ իրենց պարունակութիւնը և էջերուն մէջ ունեցած լոյսը հասարակութեան չհաղորդուին ։ Մենք այնպէս կ'իմանամք թէ ընթերցատունը չունի այնչափ ընթերցող, որքան լրագիր ։ Բաժանորդք զգալի յաւելում մը չեն ունեցած, որով հասոյթը հազար թէ ծախքը գոյցը կը բաւէ ։ Ս. յու հանգրծելու չորացուիր, մանաւանդ շնորհակալեաց արժանի է ներկայ շրջանի Տնօրէն Խորհուրդոյ ջանքը ։ Պարտաւր Պ. Աղաճանեան, Ս. Եանիւեան, Ս. Մսերեան և Ա. Աղազարեան աշխատանք երիտասարդները, որք յիշեալ Խորհուրդը կը կազմեն, խղճի մտքը ի գործ արկած են իրենց պաշտօնը, այսինքն առ կախ մնացած բաժանորդագիրները մեծ փութով հատարած և գործերը հաւասարակշռութեան մէջ մեծածեն ։ Սակայն պիտի կրնայ արդեօք ընթերցատունը իրմէն սպասուած օգուտները առ հասարակութեան միշտ այս կացութիւնը պահելով ։ Չկրնար անշուշտ, վասնզի ընթերցատունը որքան ծաղկի, գրատունը որքան ստուարանայ, դարձեալ միևնոյն ապարդիւն վիճակը պիտի պահէ, երբ ընթերցող չունենայ ։

Ուստի կրնայ ըլլալ որ ուրիշ միջոց մը ձեռք առնուի ։ Չմիւռնից Հայ հասարակութիւնը ազգասիրութեան և ընթերցասիրութեան անտարբեր չէ, միայն թէ գորդ սան և յիշողութեան կը կարօտի ։ Ազգասիրութեան զգացումը յիշեցնելու համար Տնօրէն Խորհուրդը կրնայ որ և է յարմար միջոցներով ի բաժանորդութիւն հրատարակել այնպիսի անձինք, զորս կրնայ աչքին առջև ունենալ ազգայնոց անուններուն մէկ ցանկը շինելով ։ Մենք վստահ եմք որ հարկերին ութսունը լիաձեւն պիտի ընէ Տնօրէն Խորհուրդը, իսկ ազգասիրութեան զգացումը գրգռելու համար, ընթերցատան սրահին մէջ տեսնախօսութիւններ ընելու լաւ սովորութիւնը վերահաստատել ։ Ասի իրագործելու համար հարկ է նախ ընթերցատան յատկացեալ վայրը փոխել, վասնզի այժմու սրահը բոլորովին զուրկ է ունկնդիր պարունակելու գիրքէն, ընթերցատունը կը պարտի կրկին սրահ մը ևս ունենալ լիկ գիրքեր կարդալու յատկացեալ Ատենախօսը նիւթ կը նորէ իրեն կարգաւ այսինչ կամ այնինչ գիրքերու պարունակութեան, անոր առթիւք օ

գուտներու և այլն վրայ ճառ Եւրոպայի սրահը նոյն վրան խօսուած գիրքերը յիշեալ կրկին սրահին սեղաններուն վրայ կը շարուին ունկնդրոց ընթերցման համար ։ Այս կերպով հանգիստեանց ուշադրութիւնը կը գրաւուի, հետաքրքրութիւնը կ'ազգայուի, և եթէ բաժանորդ է կրփութայ հետագայ օրը նոյն գիրքն ընթերցելու երթալ, իսկ եթէ բաժանորդ չէ կամ ընթերցատան և կամ գրատան բաժանորդ կը գրուի ։ Ասի կրնայ արգիւնարար միջոց զըլլալ ընթերցանութիւնը հեշտեալ և գիտութեամբ ծաւալելու համար ։ Հապա ինչ օգուտ պիտի կարենան ընել, գրատան մէջ փակեալ և բանտարկեալ գրեանք, երբ իրենց էջերը ժողովորդեան աչքին տակ կ'ընալով լոյսերնին հաղորդեն անոր ։

Գերապատիւ Խորէն Նարպէյ Արքեպիսկոպոսի Պուրբէշ հասած օրը, օսմանեան տէրութեան դեսպան Սիւլէյման Պէյի այցելութիւն մը կուտայ, յետոյ յետագանատան առաջին քարտուղար Օսման էֆէնտիի հետ միատեղ Ռումանիոյ նախարարաց և օտար տէրութիւններու գեւազանաց ևս կայցելէ, և տանց ամենուն ալ փոխադարձ այցելութիւնը կրնայուի ։

Երկրորդ օրը, Նորին Գերապատուութիւնը Ռումանիոյ կարտուղար իշխանին հետ տեսակցելու փափազը կը յայտնէ՝ դեսպան Սիւլէյման Պէյի որով կ'ընտրույանայ իշխանին և իշխանուհոյն Մեծ պատուով կ'ընդունուի և մէկ ժամու չափ կ'ըտեսակցի անոնց հետ ։

Նորին Գերապատուութիւնը կիրակի օր Ս. Պարտուզ կը մտնուի ցանէ իշխանին և իշխանուհոյն փափազանօք, ուր ներկայ կը գտնուին կարտուղար իշխանը, երկրին նախարարք, խմբագիրք և Ռումանիոյ շատ երևելի անձինք, իշխանուհին անհանգիստ ըլլալով չէ կրցէր ներկայ գտնուիլ, նոյնպէս Ռումանիոյ արքեպիսկոպոսը անձնական տեղափոխութեան պատճառաւ իր փոխանորդը կը զընկէ սոյն հոգևոր արարողութեան ։

Նոյն իրիկունը, Ն. Գերապատուութիւնը իշխանին պալատը հրաւիրուելով անոր հետ կը ճաչէ, երկրորդ իրիկուն ևս ճաչի կը հրաւիրուի Պ. Պօէրէսօ պաշտօնէին ապարանքը ։

Լրագիր հետեւեալ լուրերը կը հրատարակէ ։ Բաբերդէն Հոկտեմբ. 14 թուականաւ Պատրիարքարանի գրուած նամակ մը կրծանուցանէ թէ՝ Գողաղիւր գիւղին մէջ քանի մը մոկուանդ և բռնաւոր տաճիկներ տեղւոյն Հայ քահանայն գազանաբար կ'սպաննեն ու կ'մորթեն և նորատանը մէջ գտնուող 1—2 անձինքն ալ զարնելով կ'վիրաւորեն ։

Պուրբէշէն առնուած վերջին տեղեկութիւնք կ'ըմանուցանեն թէ՝ տեղւոյն Հայ գաղթականութիւնը, գերա. Խորէն Նարպէյ սրբազանի ազգաշահ քարոզներէն ու բանախօսութիւններէն խրատուելով և տղաօտրական զգացումնին արժարժուելով, փափաք զգացեր են Պուրբէշի մէջ ազգա. գիւղերով վարժարան մը հաստատել, ընդ բարձր հոկտեմբ. 18-ին գերա. Խորէն սրբազանի ինչպէս նաև զՆորին Սրբազնութիւնը Ռումանիոյ Հայոց առաջնորդ ընտրել տարեկան 18,000 Ֆրանք թոշակաւ ։

Գերա. Խորէն սրբազանի այս մասին ունեցած արամադրութիւնը չգիտեմք, բայց կը հաւատամք որ եթէ այդպիսի պաշտօն մ'ընդունի յօժարակամ, մեծ բարիք մ'ըրած կըլլայ թէ Ռումանիոյ Հայ թաղականութեան և թէ ապագային ընդհանուր ազգին համար ։

Արարատեան ընկե. վանայ վարժապետանոցին մէջ անհաւատութիւն ուսուցուելու ընդ զրայ բացուած ըննութեանը նկատմամբ, կիմանամք թէ յիշեալ ընկեութեան գործադիր ժողովը բացատրութիւն պահանջելով Փիլիպպէմեան արժա. Ղեկնար. վարժապետէն, յիշեալ վարժապետանոցի տեսուչ Պ. Նաթանեանի գէմ վանայ մէջ տուած քարոզին վրայ Ղեկնար. վարժապետ պատասխանէր թէ, ինքն իր քարոզին մէջ ոչ վարժարանի անուն տուած է և ոչ ալ տեսչի, այլ ազգա. վարժարանի մը մէջ անհաւատութեան դասագրքեր գտնուելը ազգա.

բայականութեա գէմ ըլլալուն վրայ չաւարակաց ուշադրութիւնը ։ Ղեկնար. վարժապետ ըսեր է նաև Արարատեան ընկեութեան թէ ինքն այս փով խնդիրը գոցեր է, իսկ եթէ ընկեութիւնը աւելի խուղարկութեան մէջ մտնել ուզէր չարքնէ և ուզէ իմանալ թէ ինչպէս պարժարանը, մասնանիչ օլ տի ցուցնէ ։ Արարատեան ընկեութեան վանայ վարժապետանոցն է, ուր խորթ ուղարկեանք տեսութեան օրէն և սրա ձեռքը կուտանդեանի Մէթօքը մտտ գտնելով հոգ, տակալին յարդ աշակերտաց ձեռքը կ'գտնուի երգե. անհաւատութեան այդ դասագրքերն ։

Կը փափաքէինք լսել թէ, Պ. վասիլեան էֆ. որ այս շարթու մայրաքաղաքս դարձած է, յիշեալ վարժապետան օրին մէջէն այդ գրքերն վերցնելով անհետ ցուցնէ ։

Արարատեան ընկեութեան ձեռնարկն ու նպատակը բարի է ։ Գտն. արդարև, բայց իր գործածած անձանցը և սոցա սկզբանց ու գաղափարացը մասին ալ պէտք է լաւ ընարութիւն մ'ընել ։

ՆԵՐՔԻՆ

ՎԵՆԷՓԱՌ ՍՈՒԼԹԱՆԻ ԶԱՌԸ

Անցեալները ժողովրդական գպրոցէն (մէք. թէպը միլիթիէ) ուսումնաւարտ քանի մը դայ մագաններ, վեհա. կայսեր կողմոնէ պալատը կոչուելով, Մու. թանին հետագայ խօսքերը լսելու կ'արժանանան ։

Էֆէնտիներ,

Նոր բացած ժողովրդական գպրոցէս, ձեզի պէս ժողովրդական պաշտօնեաներ հասցնելու յաջողած ըլլալու համար ուրախ եմ ։

Ձեր քննութեան ժամանակ իս անձամբ ներկայ չգտնուելուս, գրաղմուքներս պատճառ ըլլալով, յատկապէս իմ կողմանէ Միւրէյա Պէլը զրկած էի ։ Ձեր առաջ քննութեան մէջ, զըցուցած արժանաւորութիւնիդ կատարեալ կերպիւ ինձի լմայանելով գոհունակութիւնս տեղի ունեցաւ ։

Մեր սէրութեան ի նորոյ բարենորոգութեան համար, ձեզի պէս գիտուն և կրթեալ գործադիր պաշտօնեաներ հասցունելու էնչաստիճան փափաքը զցունելու համար զձեզ առջևս կանչեցի ։ Ձեզի յայնմած այս փափաքս, գեռ գպրատան մէջ գտնուող ընկերակիցներն ու գեռ պէտք է քաջաբերութիւն ըլլալ անոնց ևս իմողչայն հաղորդելով, իրենց տէրութեան և երկրին բարի ծառայութիւններ ընելու կարողութիւննին քնդարձակելու համար իրենց ուսումներուն կարևորութիւն տակնին կը պատուիրուի ։ Թէ ձեր և թէ ազգին վրայ ունեցած յոյսերս Աստուծով կատարելապէս իրականաւրով, իս ալ փափաքանոցս հասած պիտի ըլլամ ։

Ձեր վրայ ունեցած հաւատարմութեանս և սիրոյս ի նշան, առայժմ Մէճիտիէի առաջին կարգէն մէյմէկ պատուանշան կը շնորհեմ ։ Ձեր պաշտօնատեղիներուն մէջ, ցյունելիք յաջողութեան համեմատ, Աստուծով ասկէ մեծ պատուանշաններու և աստիճաններու կ'արժանանաք ։ Բարձրեալն Աստուած մեր տէրութեան և ազգին բարենորոգութեան ծառայողներուն բարի յաջողութիւն պարգևեցցէ, ամեն ։

Կայսեր. կառավարութիւնը երկու շրջաբերական ուղղած է գաւառաց կառավարութիւններուն ։ Առաջինը կը հրամայէ որ, այսուհետեւ պաշտօնական հաղորդակցութիւնը գրուող կերպիւ ընեն, և ոչ թէ հետագիւր գործածեն իսկ հետագիւր այն ատեն քաշին, երբ խնդիրը խիստ ստիպողական է ։ Երկրորդ շրջաբերականը կը հրամայէ որ զինուորներու յատկացեալ ամսական թոշակները առանց յագաղման վճարուին, նոյն իսկ, երբ գաւառին կամ սանձազին եկամուտը չբաւէ ալ ուրիշ պաշտօնէից ամսականները վճարելու, գարձեալ ստիկանութե գործակատարաց թոշակները նախաձեռնութե համարուելով հարկ է որ անմիջապէս վճարուին ։

Օսմանեան գորարանակին վերանորոգութեան յանձնաժողովը իր որոշմանց առաջին մասը է

Երևին հանած է : Տասն օրուան միջոցին մէջ
արեւորդու թեան ծրագիրը մը պատրաստելով
Ստեփանին հաւանութեան յանձնած է : Ծրագրին
գլխաւոր կէտերը հետեւեալներն են .

Ա. Գործուն ծառայութեան մէջ զեղչում մը
պիտի ըլլայ : Հետեւեալ զօրաց' երկու տարուան ,
իսկ հեծեւազօրաց և հրաձիգ զօրաց' երեք տարուան
համար :

Բ. Զօրաց թիւը 100 000 պիտի ըլլայ խաղա-
թեան ժամանակ , իսկ ի պատերազմի մէկ
ժիւղին 600,000ի պիտի հասնի :

Գ. Զօրարանակը լաւ կերպով պիտի հոգած-
ուի տարեկան 6 միլիոն քովի ծախք մը որոշելով :

Դ. Զօրածուրդի ատեն խտրութիւն չպիտի
ըլլայ միւսիմանաց և քրիստոնէից մէջտեղ .

Այս դրութիւնը անիրազօրծեի ըլլայ թէ և
Արեւմտեան Եւրոպայի ուրիշ բոլոր երկիրներու
մէջ , սակայն զինուորական ձեռնհաս իշխանու-
թիւններ , որք' երկրին բարուց վրայ լաւ տեղե-
կութիւն ունին , կը պնդեն թէ . Տաճկաստանի
համար բոլորովին կարելիութիւն ունի .

Միշէլ բաշա , որ Կ. Պօլսոյ քարափանց շինու-
թեան արտօնատէրն է , անցեալները վեհափառ
Սուլթանի ներկայանալու պատուոյն արժանացէր
է , ուր յայտնէր է Նորին վեհափառութեան
թէ , քարափանց շինութեան զատ , օտմանեան
նաւարկութեան մեծ ընկերութիւն մը պիտի
հաստատէ , և թէ ասոր իրականացման համար
Եւրոպայ խախտի ճամբորդէ : Սուլթան համիտ
կայսրը , որոյ գահակալութեանն ի վեր երկրին
բարգաւաճման համար ունեցած վեհ զգացում-
ները ծանօթ են աշխարհի , իսկառ գոհունակու-
թիւն ցոլացէր է Միշէլ բաշայի այս նպատակին :

Մայրաքաղաքին թերթերը կալուածոց' հա-
տարակաց օգտին համար վճարմամբ գրաւման
կանխակին (իսթիմալ) վրայ 31 յօդուածներէ
տաղկացեալ կանոնադիր մը հրատարակած են
պատասխանապէս , որ կայսերական վարչապետը
կրկէ : Այս կանոնադրութիւնը երեսփոխանա-
կան ժողովոյ ուղարկութեան պիտի յանձնուի
որք' յիշեալ ժողովը գումարի Այսու հանդերձ
առայութ' գործադրելի պիտի ըլլայ , փոխանակ
1855ի կանոնադրութեան :

Բ Ա Ղ Ա Բ Ա Վ Ա Ն

Յունական խնդրոյ տաներորդ նիստը այսօր
մեղի պիտի ունենայ ըստ լրաց Պօլսոյ թերթից .
և կարծուածին համեմատ վերջինը պիտի ըլլայ :

Ալպանիոյ լուրերը գոհացուցիչ են Մուխթար
բաշայի առաջարկութիւններն ընդ ունուէր են
Ալպանիոյ կողմանէ , և ձուռնեճէ ու իլալայի
ինակիչք տաճկական հողը գալիսել ետև յիշեալ
Չեքիկիները Գարատաղի պիտի յանձնուին :

Բարձրագոյն Գուռը սկզբնապէս ընդունեց
Վատիկանի առաջարկութիւնը որ Կ. Պօլսոյ մէջ
պաշտօնական ներկայացուցիչ մը ունենալ կու-
զէր : Սակայն , Պապին այդ ներկայացուցչին
տակալը Տաճկաստանի մէջ տարածեալ պապա-
կանաց վրայ ունենալիք աղքեցութեան եղա-
նակը դեռ որոշուած չէ , և կը հաստատեն թէ
արդէն այս մասին բանակցութիւններ տեղի ու-
նենալով վերջ մը պիտի գտնէ :

Ռուսաստանի լուրերը կ'իմացունեն թէ , Ա.
զեկանդր կայսրը հրաւիրած է Շուվալօֆ կոմսն
անմիջապէս Ռեդեքստուի գառնալու և կայսե-
րական մեծ փոխանորդութեան երրորդ բաժ-
նին զլուխ անցնել : Շուվալօֆ , որ արդէն բու-
տանձնած է այս պաշտօնը , նոր ծրագիրը մը
յանձնէր է իւր վճարակտին նիւիլիթիները
զապելու մասին : Այս ծրագրին տրամազ րու-
թիւններն ի գոտ պիտի դրուին Ռուս ժողո-
վուրդը նիւիլիթիներու հարուածներէն տղա-
տելու համար :

Իւ սակայն , Նիւիլիթիները երբէք չեն վճա-
տիր : Հրապարակ հանած մէկ նոր յայտարար-
ութիւններն կրպառանայ նոր ի նորոյ ծուղակներ
լարել կայսեր և այլ մեծամեծաց կենաց գէմ
առաջկելով թէ երկիրը պիտի ազատեն այս
կերպիւ զինքը հարստահարող բռնաւորութե-
ան , կը յայտնեն նաև Նիւիլիթիները թէ նոյնիսկ

իրենք հրամայած էին ընել Զարին կենաց գէմ
եղած վերջին դաւաճանութիւնը , և թէ իրենք
են պանախանաւորու այս գործին :

Աֆղանիստանի ի լոնտրա հասած հեռագրա-
կան վերջին լուրերը կը հաստատեն ազատամարտի
անգլիական բանակին վրայ քրած յարձակումը ,
անգլիական բանակին Գաջուլի մերձակայքը
դանուած ժամանակ : Ճակատամարտը սաստիկ
եղէր է , և յարձակողները , որոց թիւը 10,000է
եղէր , վայրկեան մը յաղթող հունգրիսանալով
չորս թնդանութ կը գրաւեն :

Պարսկաստանի և Անգլիոյ հետցհետէ ունե-
ցած մերձաւոր յարաբերութիւնը , տեղի տը-
ւած է Ռուս թերթերու տրտնջանաց : Մանա-
ւորապէս 40100 լրագիրը , իր սրմամբ թիւնը
կը յայտնէ : Դժբաղդարար , կընէ յիշեալ թեր-
թը , գէպքերը կ'ապացուցանեն որ պատմու-
թիւնը ճշտիչ կուտուցանէ մեզի : Եւրոպայի մէջ
արդէն մեր թողտու քաղաքականութեան դա-
ւառն պատուները քաղցրինք , մեր գէմ ատելու-
թիւններ յարուցանելով որոյ բնաւ արժանի
չէինք : Պարսկաստանի' ալ առիթ պիտի տամք
որ պաշտօնը զարմացունէ մեզի գէմ ապերախտ
գտնուելով : Ինչպիսի թագաւորութիւնը նուա-
ճելէ ետև , փութագինք այնտեղի գերութեան
մէջ գտնուող անձինքը ազատել : Մեր զօրաց
զինուորական շարժումները , թէ այդ երկրին
և թէ վրանաբնակ ցեղերու մէջ , նախ և առաջ
Պարսկաստանի օգուտ քաղել տուին անոր սահ-
մանադիտոյ ապահովութիւնն իրացունելով , զոր
չունէր մինչև այն ատեն : Վերջապէս Պէրսիսի
գանկէտին մէջ , Պարսկաստան թուրքերը ըն-
դունեցաւ , չնորհիւ Ռուսիոյ պնդման և անոր
զօրաբանակին յաղթութեան : Եւ ինչ կընէ
Պարսկաստան : Շնորհակալ կըլլայ մեզի այն ա-
մենուն համար , զոր ըրինք իրեն արգիւլելով որ
իր հպատակները մեր ճամբորդող զօրաբանա-
կին պաշար հայթայթեն , որ հակառակ է մի-
շաղկապին սոփութեանց խիստ չէզոքութեանն :

Ատեն 15 արդեօք որ Պարսկաստանի գէմ մեր
կայսրութիւնը փոխեմք : Ստուգիւ պէտք է այս
միջոցը ձեռք առնուլ , և սկիզբ մը ըլլալու հա-
մար , ուսական կուսակալութիւնը պէտք է
որ անմիջական վճարում պահանջէ այն փաստաց
համար , որ տեղի ունեցան Գիւրաբուռն մեր
սահմանակից նահանգներու մէջ ըրած հուզկա-
հարութեանն : Իսկ երբ մերժէ այս վճարումը
պէտք է խօսքը գործի փոխել և վնասները դար-
մանել Արաբական նահանգը դրաւելով որ
Պարսկաստանի ամենէ հարուստ նահանգն է :
Միով բանիւ , եօք այս կերպ վարուիմք Անգ-
լիոյ և Աւստրիոյ մեզի տուած օրինակին հետե-
ւած պիտի ըլլամք :

ՉԱՐԻՆ ԱՆՉԻՆ ԿԻՄ ԵՂԱՍ
ԴԱՆԱՋԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեծաճէ Տի- Կո-Վեռնան լրագիրը հետադայ
հեռագիրը կը հրատարակէ առ որոյ ուղղուած
է Մոսկուայի կառավարչին կողմանէ :

Գեղեւեմբեր 1 (ն. Տ.) երեկոյեան ժամը 11-
ին , այն վայրկեանն ուր կառաւորումք , որ կայ-
սեր ծառայներն ու կահները կը տեղափոխէր ,
Ռոզոֆի թաղին եօթերորդ բաժնին մէջ կը մտ-
նէր , այժմիկ մը վրիթուր յանկարծ որ զկառա-
ւորմքը երկաթի գիծերէն գուրս կը հանէր ,
կահարարսով լեցուն ձիով մը կործանեցաւ և
ուրիշ երկու ձիով , ուր մարդիկ կային , ուղիէն
գուրս ինկան :

Ալմուկէն յետոյ ուղիին վրայ խոռոչ մը բա-
ցուեցաւ , որ երկու Արչն խորութիւն (արչներ
211 հազարամէթր է) եօթը երկայնութիւն և
ուրիշ լայնութիւն ունէր : Մեռնող կամ վերա-
ւորուող չկայ : Այս աստիճանի խոռոչը փո-
րելու ձեռնարկող տունը գտնուեցաւ , որով
միջոցներ ձեռք առնուեցան փորողները գտնե-
լու համար :

Չարը երկաթուղիէն մեկնելով ֆաղայի մայր
եկեղեցին կը հասնի , ուր գոհարանական աղօթք
մը կըլլայ ի շնորհակալութիւն Աստուծոյ , ուրկէ
ձեռքային պալատը կը հասնի : Սոյն պալատին
մատարան մէջ ևս մարթանքներ կը կատարուին
ուր ներկայ կը գտնուի կայսրը և իւր անձինք

տակալին ճամբորդութեան զգեստները վրա-
նին . ներկայ էին նաև կայսերական ընտանեաց
անդամք : Փաղաքը դրօշակներով զարդարուած
էր և երկաթուղւոյ կայարանէն մինչև պալատը
տանող փողոցին մէջ խուռն բազմութիւն մը
կը վխտայ , որ եռանդապին կերպիւ Զարին տ-
գատութեան համար ուրախակցութեան աղա-
լակներ կընէր :

Ա. թ. Ն. Սի- յաւելուածով մը կը ըմբռնուցանէ
թէ կայսրը ի պատասխանի Մոսկուայի կուսա-
կալին որ փորձանքէն պրծուելուն մասին շնոր-
հաւորած էր , ըսած է— երջանիկ եմ զձեզ տես-
նելուս որ կը յիշեցնէ ինձ ձեր և ամբողջ Ռու-
սիոյ հաւատարմութեան ապացոյցը : Ապրիլ շի-
արկածին ժամանակ : Գիտէք երկէ իրիկուան
արկածն ալ : Աստուած հաճեցաւ խնայել ինձի ,
և ինձի ընկերակցողաց : Ինքզինքս Տիրոջ ձե-
ռաց յանձնեցի և Տէրը պահպանեց զիս : Կը դի-
մեմ բոլոր պատուաւոր անձանց որ չարէն խոյս
տան , կը դիմեմ ծնողաց , որ պէտքի իրենց դա-
ւակները բարութեան ճանապարհին մէջ ուղ-
ղեն , զանոնք համեստ քաղաքացիներ և ոչ թէ
չարագործներ ընելու համար :

Այս խօսքերը անբացատրելի համակրութք
ընդունուեցան : Լուրը համեմուն պէս Սէն-
Քէդէրպուրի քաղաքը դրօշակներով զարդար-
ուեցաւ :

— Թայժ լրագրոյ Պէրսիսի թղթակիցը կըսէ թէ,
կիցոմ կայսեր և Տանիմարքայի թագաւորին
տեսակցութիւնը ոչ կը մտաւորանի դուքսին և
ոչ ալ Ռրահայի դաշնադրութեան վրայ եղած է :
Յունական տահմանադրութեան վրայ տեսակցէր
են երկու վեհապետք : Հելլենացիք դրդուե-
լով սոյն խնդրոյն յապաղման համար ամբաս-
տանէր են Եօրկի թագաւորը , և սա ևս վախ-
նալով որ իր նախորդ Օթոն թագաւորին բաղ-
դին կը վիճակի , ինքրէր է իր հօրմէն որ կիցոմ
կայսրը աքղու միջամտութիւն մը ընէ այս
խնդրոյն մէջ : Այս է ահա երկու վեհապետաց
տեսակցութեան բուն պատճառը , որ տարա-
ձայնութեանց տեղի տուաւ Եւրոպայի մէջ :

ՍԱՀՄԱՆԱԴԱՐԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ ԾՐԱԳԻՐ
« ՌՈՒՌԻԱ »

Մտորին դահլիճը (Մէքսիկան քայս Տուամ)
դիւաւորապէս դիւղաց' տարրէն պիտի բաղկա-
նայ ը' դ' յակառակն աարձ : դահլիճը (Պայարու-
քայս Տուամ) պիտի զմուռի միայն կայսեր
կողմանէ կոչուած անդամներէ և ուրձրագոյն
ազնուապետարս (պօյար) կարգէ բնտեալներէն
Այս վերջին դահլիճը պահպանողական կուսակ-
ցութիւնը պիտի ներկայէ : Բարձրագոյն ազ-
նուապետականութիւնը ընդհանրապէս պահ-
պանողական քաղաքացաց դրօշին տակնէ այսօր :

Այս ներկայացուցչական դրութեան զուրկ
պիտի ըլլան առայժմ կովկասն , Սիպիւրիոյ և
կեդրոնական Ասիոյ ժողովուրդք մէկ խօսքով
ուսական Սիւան :

Այս կոմսն պիտի միանան փոխ—արքայական
իշխանութեան տեղի և պիտի կառավարուին
փոխ—արքայի մը կողմանէ : սոյն իշխանութեան
համար որոշուած է արդէն (Գեմ—Գուքս Մի-
քայէլ Նիքոլայէվիչ արժմու կառավ : փիւստու :
Մամուլը անորոշ օրէնքով մը կատարեալ ա-
զատութիւն պիտի ստանայ , այլ ուրիշ դրութք
և մասամբ ևս անկախ , պետութեան մէջ :

Ռաթուր (Ռահմանագրութիւնը) կը պարտի
հաւատարապէս հաստատել գաւառացաց անկա-
խութիւնն ու անփոփոխելութիւնը :

Չէմպուաները , այսինքն գաւառաց Տիէթեն-
րը նոր իրաւասութիւններ պիտի ստանան նաև
իրաւունք պիտի ունենան գաւառաց վարչու-
թիւններուն հսկել :

Չինուորական ստիպողական ծառայութիւնը
լիովին պիտի կատարելագործի : Չինուորական
գաղթականութիւնք (այսինքն Տօնի , Ռւր , ,
Ազրիսի և կասպից ծովուց եղերքներուն նոյնպէս
Չերնոօրիդ գողագներունը) պիտի լուծուի :

Տրոց դրութիւնը հիմնովի պիտի բարեկար-
գուի , և անհատական տուրքը (բօտ : խնայա
բօտաթէ) պիտի ջնջուի : Հասարակայնն տուրքը
պիտի Միլիանայ և առանձնաշնորհեալք հաւա

սոր իրաւունք պիտի ունենան հասարակութեան հետ :

Տէրութեան պարտուց մտքը տու ծայր մը և հասարակաց պարտուց հաշուէքննելը մը պիտի կարգուին :

Պաշտօնեայք պատասխանատու պիտի ըլլան խորհրդարանին առջև :

Իսկ գալով կայսեր անձին, իսրև նուիրական և անյարձակելի, զերծ է բոլոր պատասխանատուութենէ :

Կառավարիչք պատասխանատու են ուղղակի 95 միլիոններու առջև, և Հասարակաց ինքնիշխանութիւնը պիտի ճանչուի օրէնքով մը :

Պետութեան բոլոր պիտի շնորհի :

Տէրութեան պաշտօնէութիւնը պիտի ստորաձուլին, և 13 կարգ վարչութիւնք պիտի վերցուին :

Օրինաց առջև հաւատարմութիւնը սեղմամբ պիտի հաստատուի : (Գուցէ հրէից կայսրութեան նկատմամբ է այս :)

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալները յունաց առաջնորդարանին մէջ արտաքոյ կարգի ժողով մը գումարեցաւ, ուր խորհրդակցութիւն եղաւ կայսերական կառավարութեան ուղած 1,500,000 զուրուչի պէտէ լիւթի տուրքին վճարման վայր Բանի մը անգամներ առաջարկեցին այս պարտուց վճարման համար եղած կեդրոնական վարչութիւնը փոփոխել, Հասարակութիւնը իր ամեն ճիշդ կիսափէ այս պարտքը վճարել օսմանեան սիկին 350 շրջաբոյ շարժողութեան հաստացանելով :

Պէտիւրիան բաշտի որդի Նէճիպ—Պէյ Այսքանի Միւթեարքի կոչուած է :

Գիւղաքաղաքներէն հասած լուրերուն նուիրելով, օգերը խիստնպատասար կերպիւ օղնած են դաշտերուն առատարքութեան : Վարուցանք և հարաւունք այնպիսի գոհացուցիչ կերպիւ եղէր են, որ յառաջիկայ տարուան մէջ մեր վերայէթիւն ամբողջ շահարանները լցունելէ ետեւ, արտածութիւն ևս պիտի ըլլայ նշանաւոր քանակութեամբ :

Տեղւոյս թերթերէն մին հետեւեայք կըզրէ՝ Միտիլիէն մեզի հասած նամակ մը կիմացունէ թէ ինչպէս գիտի և ինչպէս զարգացնել այլ կըզգեաց մէջ, այդ կըզգին մէջ ևս երևան ելէր է այն ստեղծի հիւանդութիւնը, որ նարնջներաց և կիտրոնի փանդուզական պարտէքները չորցունելու փանդին մէջ արկած է : Մեր թղթակիցը կըզգա թէ երբէք միջոցներ ձեռք աննուած չեն այս հիւանդութեան ինչ ըլլալը քննելով, անոր գործան մը գանձելու համար :

Փաղաքին մէջ նոր հաստատուած Առևտրական Դահլիճին առժամանակայ վաճառական շահագործը անցեալ օր գումարեցով, քուտար կութեան գործարարութեան ձեռնարկեց : Քուտար կութիւնը եղած էր Դահլիճին Գիւանն ու խորհուրդը կազմելու համար Բուէարկութիւնն հետեւեալ արգիւնքն ունեցած է, այսինքն, Պ. Բոլ Օմիրո նախագահ, Պ. Էմիլ Պիւրան փոխնախագահ, Պ. Բէէք Ալիթթի, Սպարթալեան, Էտուարդ, Ճիւլիէնեանի խորհրդական կոչուեցան ներքնածութեան բաժնիս, իսկ արտածութեան բաժնիս խորհրդական կոչուեցան պարտուցը կրնէթ Քուէի, Անթուան Պալեան, է, ժ. Տայի :

Ներքին գործոց պաշտօնէութեան կողմանէ շրջաբերական մը հասած է նահանգիս կառավարութեան, վերաբերեալ հասարակաց սպասարկութեան : Մոյն շրջաբերականը միւս վիլայէթներու ևս ուղղուած է :

Ներքին գործոց նախարարը ուշադրութեան առնելով գաւառներէ ի կ. Պոլիս հասած գողութեանց, սպանութեանց և շարագործութեանց արատները, զորս միշտ տարբեր կերպիւ կըհարուցեն գաւառական իշխանութիւնք երբ հարցուն պաշտօնէութեան կողմանէ, պատասխանելով թէ իսպառ տեղի ունեցած չէ այդպիսի բան մը, կամ թէ արտնջացողք չսփառանցողքն իստած են, կըզատուիր որ, այսուհետեւ վերջ տալու համար այդ անտեղութեանց, գաւառական իշխանութիւնք ամեն ա-

միս արձանագրեն սպանութեանց և ոճրագործութեանց իրողութիւնները որք կըխտարունին իւրաքանչիւր քաղաքաց և գիւղորէից մէջ : Այս միջոցով մանրամասնաբար պիտի արձանագրուին ոճրին թուականը, պարագայները, եղանակը և փխսանութեան յանցանքարտին տրուած պատիժին կերպը և այլն :

Գայմագամները կըպարտին ամեն ամսագլխի այս կերպով Միւթեարարքներուն գրել, այս վերջինք ալ վարչներուն պիտի գրեն, և վարչներն ալ ներքին գործոց պաշտօնէութեան, վարչները արձանագրութեանց հետ միասեղ տեղեկագիր մ'ալ պիտի ուղղեն գաղաներու կամ նահիյէներու զանազան կացութեանց վերայ : Շրջաբերականը կըյաւելու նաև որ այս պատուէրը խստիւ չգործադրուած ատեն նյատիժ պիտի ընդունին պատուիրեալք, առաջին անգամ պարզապէս յուշ պիտի առնուի իրենց, երկրորդ անգամ մէկ ամսականէն պիտի զրուկուին, և երրորդ անգամ պաշտօնանկ ըլլան :

Անցեալ ուրբաթ օր Միտիլիի մէջ սաստիկ երկրաշարժ մը ըլլալով ամբողջ կըզլին կըշարժի, այնպէս որ տասը տարիէ ի վեր այս սաստիկութեամբ շարժ եղած չէ եղէր Բանի մը անգամ ևս կըշարունակէ շարժը, բայց բարեբաղդաբար քիսս մը չէ անթէր :

Կիրակի առաւօտ Ս. Սան Իաննոս եկեղեցւոյ մէջ, Ռուսիոյ վեհափառ կայսեր կենաց գաւաճանութենէն փրկուելուն համար, յատկապէս գոհարանակամ մաղթանք և Ս. Պատարագ մատուցուեցաւ, ուր ներկայ կգտնուէր նաև Ռուսիոյ հիւպատոս Պ. Միւսիւրիւս :

Պատրիարքական նախկին փոխանորդ Աթ. Մկրտան տէր Սալմանէս քահանայ, որ եգիպտոսի ազգային գործոց քննիչ պաշտօնիւ անդուկորած էր, ըստ արժանւոյն իւր պաշտօնը կատարելէ ետեւ ուրբաթ օր քաղաքս հասանտի վերադառնալով և Արժանապատուութիւնը մտադիր է քանի մը օր քաղաքս մնալու :

Հակահասունեան ազգայիններէն Գապարաճեան վիչէն էֆ. ընտանեօք միատեղ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ գիրկը կըվերադառնայ :

Կիմանամք թէ մեծաշուք էլիսս էֆէնտի Չայեան կայսերական կառավարութեան կողմանէ պատուած է, Արտաքին գործոց միւթեշարութեան օգնականի պաշտօնիւ :

Անթէրթիզ անուն Ամերիկեան գորվէթը չորեքշաբթի օր մեր նաւահանգիստը հասաւ, Սիւրէայէն գալով, Սոյն գորվէթը կ. Պոլիս պիտի մեկնի յառաջիկայ շաբթուս սիկիլը, Հրամանատարն է ժ. Օ. Սէֆրիճ և ունի 150 հոգի :

Բեֆօթ հետեւեալը կըհրատարակէ :

Զմիւռնիոյ պէտէթի ժողովներու ուշադրութիւնը կըհրաւիրուէր նմապ վերաբերեալ ընչից մէջ ներմուծուած խարդախութեանց վրայ : Բազմաթիւ հացագործներու ալիւրին մէջ խառնուած են բակլայ, եգիպտացօրէն և սիւնուն, փողոցներուն մէջ ծախուած սալիպները դերժեն տեսակ տեսակ մնասակար նիւթերէ, կաթը այնչափ խառնուած է ջրով, որ սնունդ տարու յատկութիւնը կորուսած է : Օղին ջրախառն ալքօզ (ոգի) մ'է. միայն : Նայիպը կընունքն ու չափերը կըճշտէ, բայց անկարող է նա հասարակաց առողջութեան քննող այս խարդախութիւնները քննել : Ռուսի պէտէթէն կըպարտաւորի ասոնց անալիզն անուել :

Գաւառական աստիկանութիւնը մտերմ պիտի ստուարանայ Մեր գաւառի աստիկանութեան գործակալաց թիւը 1700 է, Սիւարիներն ալ միատեղ հաշուելով, Ասոնց վրայ պիտի աւելնան 300 հոգի ևս, որով 2000 անձինք պիտի ունենայ մեր վիլայէթը հասարակաց անալիզութեան հոկող :

Գանձային տեսչին գանդատանաց վրայ, Ալաշհիրի գայմագամը պաշտօնանկ ըլլալով գատաստանի կենթարկուի : Այդ պաշտօնին կըկոչուի սուրճամանակեայ կերպով Մէնթէշի նախորդ մուհասէպէճի Հազըր էֆէնտի :

Գիւղերէն եկող ճանապարհորդք միշտ կըգանգատին գողերու և շարագործաց շտոնաւուն վրայ : Չերքէները մանաւանդ մեծ թիւը կըկազմեն շարագործաց մէջ :

Մասնիչի Արգարեան քննութեան կողմանէ նպաստ վարդուհետեւ վարարանի, անցեալ տնայ մէջ ունեցած վնակահանութեան շահող թիւերը առ մէջ ուղղուած ըլլալով հետագայ կերպիւ կըհատարակուէր, և հաւասնի թիւերը :

4, 59, 82, 92, 98, 126, 145, 150, 188, 238, 282, 234, 324, 352, 377, 413, 420, 443, 463, 468, 498, 540, 562, 595 :

Թրիէտի և գաղղիական շոգեանները որ շարժու մէջ կընպասուէին գեւա միջև այսօր շատան, օգերուն գեղութեան պատճառաւ : Մարտիի միջոց շոգեանն անգամ, որ երէկ ըստ սովորութեան, մեկնեցաւ, շինաշով հանդուրժել հիւսիսային հոգմէ կատաղած ծովուն ալեաց, քանի մը ժամէն ետեւ ետ գարձաւ :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Աֆիօն.—Պառնոստը նուազ է, վերջին երկու շաբաթուան մէջ ծախուեցան 50 կողովի շախի գին 142—145 զուրուչի չէքին :

Բամսակ.—Շարթուս վերջերը այս նիւթն ալ եկաւ քիչ փնձառուի կարգուէն հասած աննպատի լուրերուն համար, Գրեթէ 100 հակ մեքենայով մաքրուած տեսակէն ծախուեցան ի գին 440—445 զուրուչ կենց ինարը, Ատանայի բամսակէն ծախուեցան 50 հակ 425 զուրուչ :

Բալամուս.—Այս նիւթէն ըստ բաւականի ծախուեցաւ այս շաբթուս, այսինքն 17,000 յիւն. դինար թէ բանուած և Բէ չբանուած տեսակէն ի գին 78—112 զուրուչ Մեծմանս կոչուած տեսակին գինն էր 147 զուրուչ :

ԾԱԽՈՒՅՈՒՄ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ

ՆՈՐ ՔԵՐԹՈՒՄ ՆԵՐ

Պ. Կեանքս իս. Թերզիանի, Ալեքիէտ տը Միւսէի բանաստեղծութիւններէն ընտրանք թարգմանած նոր քերթուածոց Բ. տետրակը ի նոյն ընծայուած ըլլալով, կըծախուի թարգմանչին քով, Ֆրանկայ թաղ թիւ 51 : Պ. Պետրոս իս. Թերզիանի թարգմանութեան մէջ ունեցած յաջողակութիւնը, յայտնի է գրասէր ազգայնոց, վասնզի շատ առիթներով փորձուած է նորա քաջ հմտութիւնը թէքի հայ և թէքի գաղղիներէն լեզուս, ուստի, փոխառա քաղցր ոճ և հաւատարմութեամբ թարգմանութիւն մը պիտի տեսնէ լիւթերցողը մոյն քերթուածոց մէջ : Ի ծաւալումն գրականութեան և ի քաջալիւրիւթիւն թարգմանչին կըհրաւիրուէր զազգայնոս մէջմէկ օրիսակ ունենալ անկէ :

ՃԱՇԱԿ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԿՐՈՒԹԻՒՆ

Ծաղիարաց ալիւրիկ լեզուս, հանգրձ գրական, պատմական, կենսագրական եւայլ ծանօթութեամբ :

Ալեքսանդրէայ և Պիլիթիէն

Մոյն գրքից արժան է որ ամեն ուսանողներու ձեռքը գտնուի, ոճի և նիւթի ընտրութե մէջ վարժուելու համար : Կրթարտեսակի իր մէջ Ալիշանի, Արօզիանի, Պէշիկթաշեանի, Նայրան գեանցի, Խորէի Կարդէի ևայլ քանի մը ազգերիչներու ստանաւոր և արժակ գրութիւնները տեղտեղ ևս համաձայն կենսով վրթ իրեներ, և ծանօթութիւնը կըզանուին :

ՊՕԲԱՂԻՈՒ ՏԱՄՆՈՐԾԱԿ

Մոյն համալուար գործը, որ գրարձաւի մանրապէսերու ժողովածոյ մէջ արդէն եւրոպայի մէջ ամեն լեզուներու թարգմանուած ըլլալով վերջին օրերս ընտրանք հայերէնն ալ թարգմանուած ու հրատարակուած է :

Ինն երկու հատորին 1 արժամ մէջիտիս :

Տէր Լեւոնտիս

Պ. Գ. Պ. Գ. Գ. Գ. Գ.